ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» օգոստոսի 2015թ. N 70

ք. Արմավիր

ԱՐԹՈՒՐ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով, 167-րդ հոդվածի երրորդ մասով, 169-րդ հոդվածի երրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետի 2015 թվականի օգոստոսի 26-ի զեկուցագիրը՝ «Շանթ-2015» ռազմական վարժանքի մասնակցության կապակցությամբ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանի 2015 թվականի օգոստոսի 26-ի համաձայնությունը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանին 2015 թվականի օգոստոսի 26-ից հետ կանչել 2015 թվականի իր ամենամյա արձակուրդից:
2. Արթուր Այվազյանի 2015 թվականի ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված 17 աշխատանքային օրերը տրամադրել 2015 թվականի ընթացքում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ